ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«____» _____ 2010թ. N _____Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N13-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N37-Ն, 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N107-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետերին, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ և 32-րդ կետերին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային և քաղաքաշինական գոտիները սահմանելու մասին» N13-Ա որոշումը:

2.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ համայնքային կանոնները հաստատելու մասին» N37-Ն և 2010 թվականի մայիսի 7-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» N107-Ն որոշումների 1-ին կետերից հանել ««Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային և քաղաքաշինական գոտիները սահմանելու մասին» N13-Ա որոշմամբ սահմանված» բառերը:

3.Սահմանել՝

1) Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային գոտին (քարտեզի տեսքով)՝ համաձայն N1 հավելվածի.

2) Երևան քաղաքի քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտին (քարտեզի տեսքով)՝ համաձայն N2 հավելվածի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N13-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N37-Ն, 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N107-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի հ.13-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու, 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն, 2010 թվականի մայիսի 7-ի N107-Ն որոշումներում փոփոխություն կատարելու և Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային և քաղաքաշինական գոտիները սահմանելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N13-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N37-Ն, 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N107-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի հ.13-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու, 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն, 2010 թվականի մայիսի 7-ի N107-Ն որոշումներում փոփոխություն կատարելու և Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային և քաղաքաշինական գոտիները սահմանելու մասին» որոշման ընդունմամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի սպասվում:

Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N13-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N37-Ն, 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N107-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 31-րդ և 32-րդ կետերի համաձայն Երևանի ավագանին սահմանել է քաղաքային նշանակության գովազդային գոտին /քարտեզի տեսքով/, ինչպես նաև քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտին /քարտեզի տեսքով/:

Նշված գոտիների սահմանների անհրաժեշտ վերաճշտման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N1517-Ն և Երևանի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ համայնքային կանոնները հաստատելու մասին» N37-Ն, 2010 թվականի մայիսի 7-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» N107-Ն որոշումները, Երևան քաղաքի հենակետային ներկա իրավիճակը, քաղաքի 2005 թվականին հաստատված գլխավոր հատակագիծը, ինչպես նաև վերջինիս հիման վրա մշակված վարչական շրջանների գոտիավորման նախագծերը: Դրանց համադրման արդյունքում առավել կոմպակտացվել է քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտին, որի մեջ ընդգրկվել են քաղաքի առաջնահերթ և առավել ակտիվ քաղաքաշինական գործառույթներ նախատեսող, ինչպես նաև վերակառուցման ենթակա տարածքները, քաղաքի մայրուղային /գոյություն ունեցող և նախագծային/ ճանապարհներին և քաղաքային նշանակության փողոցներին հարող տարածքները, ընդհանուր օգտագործման և հատուկ նշանակության կանաչ տարածքները, ջրային մակերևույթները, գրունտների բարդ ինժեներաերկրաբանական բնութագիր ունեցող տարածքները, հուշարձանների պահպանական գոտիները, արդյունաբերական գոտիները և այլն:

Այդ ամենի արդյունքում որոշակիորեն ընդլայնվում են քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտուց դուրս տարածքների սահմանները: Առանձնացված այդ տարածքները անկլավային են և նրանցում տեղի ունեցող քաղաքաշինական գործառույթները

հնարավոր է իրականացնել վարչական շրջաններում արդեն իսկ ձևավորվող համապատասխան ծառայությունների միջոցով:

Ելնելով վերոգրյալից ավագանու քննարկման է ներկայացվում Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N13-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու, 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-ն, 2010 թվականի մայիսի 7-ի N107-Ն որոշումներում փոփոխություն կատարելու, և Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային և քաղաքաշինական գոտիները սահմանելու մասին» որոշման նախագիծը:

Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԳՈՏԻ

ՀԱՎԵԼՎԱԾ N1
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2010 ԹՎԱԿԱՆԻ ..... N .....
ՈՐՈՇՄԱՆ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԳՈՏՈՒՑ ԴՈՒՐՍ ՏԱՐԱԾՔՆԵՐ
- ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԵՎ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ
- ԱՎԱՆ — ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ
- ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ
- ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՏԻ

ՀԱՎԵԼՎԱԾ N2
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2010 ԹՎԱԿԱՆԻ ..... N .....
ՈՐՈՇՄԱՆ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՑ ԴՈՒՐՍ ՏԱՐԱԾՔՆԵՐ
- ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԵՎ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ
- ԱՎԱՆ — ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ
- ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ
- ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐ